# ՉՈՐՍ ԳՈՀՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԿՆԵՐ

### ՂՈՒԿԱՍ 22:14-20

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

*14 Եւ երբ ժամը հասավ, սեղան նստեց, և տասներկու առաքեալներն էլ՝ իր հետ: 15 Եւ*
*նորանց ասեց. Ցանկանալով ցանկացա՝ այս զատիկը ձեզ հետ ուտել իմ չարչարվելուց*
*առաջ: 16 Որովհետև ասում եմ ձեզ, թէ սորանից էլ երբէք չեմ ուտի, մինչև որ կատարուի*
*Աստուծո արքայությունում:*

*17 Եւ բաժակը վերցնելով, <u>գոհություն</u> հայտնեց Աստծուն և ասաց. «Առէ՛ք այս և*
*բաժանեցէ՛ք ձեր մէջ. 18 Որովհետև ասում եմ ձեզ, թէ այսուհետև որթատունկի բերքից չեմ*
*խմելու, մինչև որ գա Աստծո արքայությունը: 19 Եւ հաց վերցնելով՝ <u>գոհություն</u> հայտնեց*
*Աստծուն, կտրեց, տվեց նրանց և ասաց. «Այս է իմ մարմինը, որ շատերի համար է տրված.*
*այս արէ՛ք իմ հիշատակի համար: 20 Նույնպէս և բաժակը վերցրեց ընթրիքից հետո և*
*ասաց. «Այս բաժակը նոր Ուխտ է իմ արյունով՝ ձեզ համար թափուած:*

## *Հիսուսը ուներ գոհացող սիրտ:*

***Ել. 6:6-8 -** 6 Գնա՛ իսրայէլացիների մօտ ու ասա՛ նրանց. Ես եմ Եհովան.* *(Ես եմ ՈՐ ԵՄ. Եւ ասեց. Այսպէս ասիր Իսրայէլի որդիներին. Ելից 3:16)*

- *և Ես ձեզ ազատելու եմ եգիպտացիների բռնութիւնից,*
- *ձեզ փրկելու եմ նրանց ծառայելուց,*
- *ձեզ ետ կգնեմ իմ մեկնած բազուկով. ու նրանց գլխին մեծամեծ պատիժներ հասցնելով 7 Եւ Ձեզ պիտի դարձնեմ իմ ժողովուրդը և պիտի լինեմ ձեր Աստուածը. որ ձեզ ազատելու եմ եգիպտացիների բռնութիւնից:*
- *8 Եւ ձեզ այն երկիրը կտանեմ, որի համար իմ ձեռքը բարձրացրի (որ երդուեցի) որ տամ Աբրահամին, Իսահակին և Յակոբին: Այն ձեզ եմ տալու որպէս ժառանգութիւն, որովհետև Ե՛ս եմ Տէրը:*

## I. ՉՈՐՍ ԳՈՀՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԿՆԵՐ. ԱՅՍ ԱՐԷՔ ԻՄ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ.

*Սաղ.* **23:5 -** 5 *Դու իմ առաջին սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց. դու իմ գլուխն օծում ես յուղով. իմ բաժակը խիստ լիքն է:*

### 1. Ես քեզ դուրս կբերեմ – I will bring you out

**Ել. 6:6-8 - 6 Ես ձեզ ազատելու եմ եգիպտացիների բռնությունից.** *(ծառայությունից)*

***Այս առաջի բաժակի մասին նշում չկա ոչ մի ավետարանում, Քանի որ ընթրիքն արեցին երկրորդ հարկում և տան դուռը գտնվում էր առաջի հարկում էր:***

**Գոհություն Աստծուն – որ մեզ աշխարհից դուրս բերեց:**

- *Հռ.* **7:24-25 -** 24 *Ի՜նչ խղճալի մարդ եմ ես: Ո՞վ կը փրկի ինձ այս մարմնից, որ ինձ մահուան է տանում:* 25 *Բայց գոհութիւն Աստծու՝ մեր Տէր Հիսուս Քրիստոսի միջոցով:*

### 2. Ես կփրկեմ քեզ – I will Rescue you.

**6 ձեզ փրկելու եմ նրանց ծառայելուց.**

**Գոհություն Աստծուն – որ մեզ ազատեց:**

**2** *Տիմ.* **4:18 -** 18 *Եւ կ'փրկէ ինձ Տէրն ամեն չար բանից և կ'ազատէ կ'հասցնէ իր երկնային արքայութեանը. որին լինի փառք հավիտյանս հավիտենից. Ամէն:*

### 3. Ես քեզ ետ կգնեմ – I will Redeem you. with an outstretched arm

**6 ձեզ ետ կգնեմ իմ մեկնած բազուկով.**

*Ղուկ.* **4:5-6 -** 5 *Եւ սատանան նորան մի բարձր սար հանեց՝ և աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցոյց տուաւ նորան մի վայրկեանի մէջ:* 6 *Եւ սատանան ասեց նորան. Այս բոլոր իշխանութիւնը և սորանց փառքը քեզ կ'տամ. որ ինձ է տրուած. և ում որ կամենում եմ տալիս եմ սորան:*

**Գոհություն Աստծուն – որ մեզ արդարացրեց:**

**1** *Կոր* **6:18 —** *Դուք մեծ գնով գնվեցաք*

### *4. Ես քեզ կտանեմ ... ինձ մոտ – I will take you... to me*

***Եւ ձեզ այն երկիրը կտանեմ, որի համար իմ ձեռքը բարձրացրի.***

*Հով. **14:1-3 - 1** Ձեր սիրտերը թող չխռովեն. Աստուծուն հաւատացէք, և ինձ
հաւատացէք: **2** Իմ Հօր տանը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ ես ձեզ կասէի.
Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: **3** Եւ եթէ գնամ և ձեզ համար տեղ
պատրաստեմ, դարձեալ կգամ և ձեզ ինձ մօտ կառնեմ. որ ուր ես եմ, դուք էլ լինիք:*

***Գոհություն Աստծուն – որ մեզ հավիտենական կյանք խոստացավ:***

## Ամփոփում

1. ***Գոհություն Աստծուն – որ մեզ աշխարհից դուրս բերեց:***
2. ***Գոհություն Աստծուն – որ մեզ ազատեց:***
3. ***Գոհություն Աստծուն – որ մեզ արդարացրեց:***
4. ***Գոհություն Աստծուն – որ մեզ հավիտենական կյանք խոստացավ:***